

ՊԼԻԻՇԿԻՆ

(ԳՈԳՈՒԻ «ՄԵՌԱՅ ՀՈԳԻՆՆԵՐԻՑ» ՄԻ ՀԱՏԻԱՅ)

Թարգմ. ՄԿՐՏ. ՂԱԶԱՐԵԱՆՅԻ

Մինչդեռ Զինիկովը մտածում էր և ներքուստ ծիծաղում գիւղացիների՝ Պլիշկինին կպցրած մականւան վրայ ¹⁾, չը նկատեց, թէ ինչպէս հասաւ՝ քաղաքի խորճիթներ ու փողոցներ ունեցող լայնարձակ գիւղի մէջ տեղը։ Շուտով, սակայն, նրան այդ նկատել տւեց մի կարգին ցնցում, որ պատճառեց գերաններից շինած սալարկը, որի առջև քաղաքի քարէ սալարկը ոչինչ էր։ Այս գերանները դաշնամուրի մատների նման մերթ քարձրանում էին, մերթ ցածանում, և անզգոյշ անցորդը ²⁾ ստանում էր կամ մի ուռոյց ծոծրակի վրայ, կամ մի կապոյտ բիծ ճակատի վրայ, կամ թէ չէ պատահում էր, որ իւր սեփական տաամներով սաստիկ կծում էր իւր իսկ սեփական լեզւի ծալքը։ Մի տեսակ առանձին խարխուլութիւն նկատեց նա գիւղի բոլոր շինութիւնների վրայ. խորճիթների վրայ գերանները մթնադոյն էին և հին. շատ կտուրներ ծակծկոտել էին մաղի նման. միւսների վրայ մնացել էին հաշաները ³⁾ վերեւից, և երկու կողմից բարակ գերանները կողերի նման։ Նրեում էր իրանք տէրերը նրանցից վար էին առել կեղեկները ⁴⁾ և տախտակը, դատելով, և ի հարկէ

¹⁾ Կարկատած, և դրա հետ միասին մի գոլական, շատ լաջող, բայց անդործածական քաղաքալարի խօսակցութեան մէջ։

²⁾ Вздохъ.

³⁾ Конегъ.

⁴⁾ Дранье, ծառերի կեղևներ, որոնցով ուռու գիւղացիք լքցնում են տան գերաններից շինած պատերի միջերբը։

իրաւացի, որ անձրեւ ժամանակ խրճիթը չեն ծածկում, իսկ պարզ օրը արդէն ինքն էլ չի կաթիլ. իսկ կնոջ նշան աչնտեղ նստել էլ չարժէ, քանի որ արձակ տեղ կալ և՛ դինետանը և՛ մեծ ճանապարհի վրայ, մի խօսքով, որտեղ ուզում ես: Խրճիթների լուսամուտներն առանց ապակու էին. մի քանիսը խցւած փալասով կամ զխաւնով. կտուրների տակ ճաղերով փոքրիկ պատշգամբները, որոնք յայտնի չէ, թէ ի՞նչ պատճառներով շինուում են մի քանի ռուսական խրճիթներում, թեքւել էին և սևացել, մինչև անգամ ոչ գեղարւեստօրէն: Խրճիթների յետեւից շատ տեղերում շարքերով ձգւում էին հացի ահագին շեղջեր, որոնք, ինչպէս երեւում է, երկար մնացել էին անձեռնմխելի. նոքա գոյնով նման էին հին, վատ թրծած աղիւսի. նոցա դաշաթների վրայ բուսել էր ամեն տեսակ խոտ ու մոտ և մինչև անգամ կողքին կաշւել էր մի թուփ. Հացը, ինչպէս երևում է, աղայինն էր: Հացի շեղջերի և խարխուլ կտուրների յետեւից վերամբառնում և պլպլըլում էին մաքուր օդի մէջ մերթ աջ, մերթ ձախ կողմից, նալած թէ կառքը որ կողմն էր պտըտում, գիւղի երկու եկեղեցիները, մէկը միւսի կողքին, մէկը դատարկւած, փայտից, միւսը՝ քարեայ, դեղնած պատերով, բծաւորւած, ճաքճքոտած: Մաս մաս սկսեց երևալ աղայի տունը և ապա ամբողջապէս ներկայացաւ աչնտեղ, որտեղ խրճիթների շղթան ընդհատւեց և նրանց փոխանակեց դատարկ տեղ քանջարանոցով կամ կաղամբանոցով, շրջապատւած ցածլիկ, տեղտեղ կոտրուած ցանկապատով: Մի տեսակ զառամեալ ինւալիդի էր նմանում այս տարօրինակ դղեակը, երկնք, անշնորհ երկար: Տեղ տեղ նա մի յարկանի էր, տեղ-տեղ երկու: Մթնագոյն կտուրի վրայ, որ ոչ ամեն տեղ յուսալի պաշտպանում էր նրա հնութիւնը, ցցւած կային մէկը միւսի հանդէպ երկու բելւեդերներ, երկուսն էլ արդէն խախտւած, զրկւած երբեմն իրանց ծածկող ներկից, Տան ճաքճքոտած պատերը տեղ-տեղ երևան էին հանում սըւաղի մերկ ցանցը և, ինչպէս երևում է, ֆեսսներ էին կրել ամեն տեսակ վատ եղանակներից, անձրեւներից, փոթորիկներից և աշնանային փոփոխանակութիւնից: Լուսամուտներից միայն երկուսն էին բաց, իսկ միւսները փակւած էին փեղկերով, կամ մինչև իսկ տախտակներ էին խփւած: Այս երկու լուսամուտները, իրանց կողմից, նոյնպէս

կիսաքող էին. նրանցից մէկի վրայ կայցրած մթին էր տալիս կապոյտ, շաքարի թղթից մի եռանկիւնի:

Տան յետեւը ձգւած հին, ընդարձակ պարտէզը, որ դուրս էր գալիս գիւղից և յետոյ կորչում դաշտի մէջ, խոտերով խեղդւած ու չորացած, երեւում էր, միակն էր՝ որ թարմացնում էր այս ընդարձակ գիւղը և միակը, որ կատարեալ բանաստեղծական էր իւր գեղադրական ամայութեան մէջ: Իբրեւ կանաչագոյն ամպեր և անկանոն դողդոջ տերեւներով զմբէթներ ընկած էին երկնային հորիզոնի վրայ ազատութեան մէջ փարթամօրէն աճած ծառերի միացած դադաթները: Թղթենու սպիտակ հսկայամարմին բունը, զրկւած դադաթից, որ կոտրել էին փոթորիկը կամ կայծակը, բարձրանում էր այդ խիտ կանաչութեան միջից և կանգնում օդի մէջ իբրեւ կանոնաւոր մարմարեայ փայլուն կոթող. շեղ, սրածայր կոտրւածքը, որով նա վերջանում էր բարձրում փոխանակ թակաղակի՝ մթին էր տալիս նրա ձիւնափայլ սպիտակութեան վրայ իբրեւ գլխարկ, կամ իբրեւ սև թռչուն: Գայլուկը ¹⁾ որ ներքեւում խեղդում էր թանթրուենու ²⁾, և վայրի կաղնիների թփերը, և յետոյ վազում էր ամբողջ ցանկապատի վրայով, վերջապէս վեր էր ուղղւում և փաթաթւում էր մինչև կէսը կոտրւած թխտենուն: Հասնելով նրա մէջ տեղը, նա այնտեղից կախւում էր ցած և սկսում էր արդէն կպչել ուրիշ ծառերի դադաթներին, կամ թէ չէ՝ քաշ էր գալիս օդի մէջ, օդակ-օդակ ոլորելով իւր բարակ, բռնող ճանկերը, որոնք հեշտութեամբ երերւում էին օդից: Տեղ-տեղ բացւում էր խիտ կանաչութիւնը, արեւից լուսավառւած, և նրա մէջ տեղը երեւում էր չըլուսաւորւած խորութիւն, որ աչք էր զարկում մութ անդունդի նման. նա ամբողջապէս ստերաւորւած էր և հազիւ-հազ նշմարւում էին նրա սև խորութեան մէջ, ձգող նեղ շաւիղը, քանդւած ճաղերը, խախտւած հովարանը, ուռնեւ փակաւոր զառամեալ բունը, մոխրագոյն քարինջը ³⁾, որ իւր փշատերեւներով դուրս էր ցցւում ուռնեւ յետեւից, սարսափելի խլութեան մէջ չորացած, խառնւած ու խճճւած տերեւներ ու ռոտեր, և վերջապէս չինարի մատաղ ծիւղը, որ

1) Хмель. 2) Рябина. 3) Чипыжникъ.

կողքից տարածել էր իւր կանաչ թաթ-տերեւները, որոնցից մէկի տակ, Աստուած գիտէ ինչպէս, մտնելով արեգակը, յանկարծ դարձնում էր նրան թափանցիկ և հրեղէն, որ հրաշալի փայլում էր այս թանձր մթութեան մէջ: Մի կողմը, պարտիզի նոյն իսկ ծայրին, մի քանի բարձրահասակ, միւսներին անհամաչափ բարդիներ բարձրացրած պսակում էին իրանց դողդոջուն կատարների վրայ ազուաւի ահագին բներ: Նրանցից մի քանիսի վրայից պոկւած և ոչ ամբողջապէս բաժանւած ճիւղերը կախւած էին ցած, չորացած տերեւներով միասին: Մի խօսքով, ամեն ինչ այնպէս լաւ էր, որպէս չի կարող հնարել ոչ բնութիւնը, ոչ արեւստը, բայց որպէս լինում է միայն այն ժամանակ, երբ նոքա կը միանան միմեանց հետ, երբ մարդու, շատ անգամ աննպատակ կուտակւած աշխատութեան վրայ իւր վերջնական քանդակազրիչը կը տանէ բնութիւնը, կը թթեւացնէ ծանր զանգաճները, կ'ոչնչացնէ կոշտ ու կոպիտ կանոնաւորութիւնը և ողորմելի ճեղքերը, որոնց միջով նշմարւում է չը ծածկւած, մերկ ուրւագիծը, և երբ նա տալիս է մի հրաշալի ջերմութիւն այն ամենին, ինչ որ ստեղծւել է չափւած, յստակ և մաքուր դոմութեան մէջ:

Մի կամ երկու պտոյտ անելուց չետոյ մեր հերոսը վերջապէս տան առջէն էր, որը նրան այժմ աւելի ևս տխուր երեւաց: Կանաչ բորբոսը պատել էր արդէն ցանկապատի և դռների մաշւած փայտը, բակը բռնւած էր բազմաթիւ խախտուող շինութիւններով՝ ծառաների բնակարաններով, ամբարանոցներով, մառաններով: Նրանց մօտ, աջ ու ձախ երեւում էին դռներ, որոնք բացւում էին ուրիշ բակերի մէջ: Ամեն ինչ վկայում էր, որ այստեղ մի ժամանակ կեանքը եռ էր զալիս ընդարձակ ծաւալով, իսկ այժմ ամեն ինչ մնայլ էր: Տեսարանին կենդանութիւն տուող ոչինչ չկար. ոչ դուռ էր բացւում, ոչ մարդ էր դուրս գալիս մի տեղից, ոչ կենդանութիւն կամ տնային հոգս ու ցաւ կար: Միմիայն գլխաւոր դարբազն էր բաց, այն էլ նրա համար, որ մի գիւղացի խտրով ծածկած բարձած սայլը ներս էր քշել և կարծես զիտմամբ երեւացել այս մեռած տեղում կենդանութիւն գցելու: Ուրիշ ժամանակ այդ դարբազն էլ ամուր փակւած էր լինում, որովհետեւ երկաթէ օղակից կախ էր ընկած մի հսկայ կողպէք:

Շինութիւններից մէկի մօտ Զիշիկովը շուտով նկատեց մի Ֆի-

գուր որը սկսեց սալով եկած գիւղացու հետ կռւել։ Երկար նա չը կարողացաւ ջոկել, թէ ինչ սեռի էր ֆիզուրը։ Կլն թէ մարդ։ Հագի շորը բոլորովին անորոշ էր, շատ նման կնոջ կրկնոցի։ Գլխին գիշերաւայգդակ, որ ծածկում են գիւղացի աղախինները։ Միայն ձայնը կնոջ ձայնից մի քիչ աւելի խռպոտ թւաց։ «Վաչ թէ կին է», մտածեց Չիչիկովը ինքն իրան և իսկոյն աւելացրեց՝ «վաչ թէ չէ», — «ի հարկէ, կին է», ասաց նա վերջապէս, աւելի լաւ զննելուց յետոյ։ Ֆիզուրը իւր կողմից դիտում էր նրան նոյնպէս ուշի ուշով։ Երևում էր, որ հիւրը նրա համար մի օտարոտի բան էր, որովհետեւ նա աչքերով տնտղում էր ոչ միայն նրան, այլ և կառապան Սելիֆանին և ձիերին, դնէից սկսած մինչև պոչը։ Նրա գոտիից կախ ընկած բանալիներից և նրանից, որ նախատեսում էր գիւղացուն բաւական հայհոյական խօսքերով, Չիչիկովը եզրակացրեց, որ նա կլիւշնիցա ¹⁾ պէտք է լինի։

— Խնդրեմ ասես, ան քեր, ասաց նա, կառքից իջնելով, աղէն...

— Տանը չէ, ընդհատեց կլիւշնիցան, առանց սպասելու, որ նա հարցը վերջացնէ, և մի վայրկեան յետոյ աւելացրեց՝ բաց ինչ էք ուզում։

— Գործ ունիմ։

— Գնացէք սենեակ, ասաց կլիւշնիցան՝ դառնալով և ալիւրոտած ու ներքեւից մեծ ձեղք ունեցող մէջքը նրան անելով։

Չիչիկովը մտաւ մութ, ընդարձակ նախասենեակը, որտեղից, կարծես մառանից, սառն օդ փչեց։ Նախասենեակից նա ընկաւ մի ուրիշ սենեակ, որ նոյնպէս մութն էր, միայն դռան տակի լայն ձեղքից շատ քիչ լոյս էր առնում։ Այդ դռան էլ բաց անելով, նա վերջապէս լոյս աշխարհ ընկաւ։ Աչքին ներկայացած խառնակութիւնը նրան շարեցրեց. կարծես տան սենեակների յատակները լւանում էին և ըլլոր կահ-կարասին առժամանակ այստեղ էին դիզել։ Սեղաններից մէկի վրայ դրած էր մինչև իսկ մի կոտրած աթոռ։ Նրա մօտ մի ժամացույց, ճոճանակը կանգնած, որի վրայ սարդն արդէն ոտալն էր կցել։ Այդտեղ դրած էր կողքով թեք ընկած մի պահարան, մէջը հին արծաթեղէն, շիշեր և չինական ապակե-

¹⁾ Ключница—բանալիներ պահող աղախին։

դէն: Սատափէ մոզայիկով նախշած գրասեղանի վրայ, որի սատափը տեղ տեղ թափւել էր, և դեղնած, սոսնձապատ փոսերն էին փնայել, ինչ ասես չկար: Մի դէպ մանր գրոտած թուղթ, ծածկւած մարմարեայ կանաչած մամուլով, ձւած և կոթով. մի ինչ որ հնադարեան գիրք, կաշեայ կազմով և կարմիր եզրներով. վայրի ընկոյզի մեծութեամբ մի կիտրոն, բոլորովին չորացած. մի բազկաթռուի կոտրած թև, նամակով ծածկած մի լիւրիւմկա, մէջը մի ինչ որ հեղանիւթ և երեք ճանճ. մի կտոր զմուռ. ո՞վ գիտէ որտեղից վերցրած մի փաթախ կտոր. երկու թանաքոտած կարծես թոքախտից չորացած գրիչներ. մի բոլորովին դեղնած ատամփորիչ, որով թերևս տանտէրը փորում էր ատամները, երբ Ֆրանսիացիք դուռ չէին արշաւել Մոսկւայի վրայ:

Պատերի վրայ մօտ մօտ և խառն ի խուռն մի քանի պատկեր էր կախ տւած՝ մի ինչոր կուլի երկար, դեղնած պատկեր, որ ներկայացնում էր ահագին թմրուկներ, եռանկիւնի գլխարկներ դրած դռացող զինուորներ, խեղդւող ձիեր և որ դրած էր առանց ապակու բրոնզեայ բարակ զոլերով և անկիւններում բրոնզեայ բոլորակներով կարմիր փայտէ շրջանակի մէջ: Դրանց կողքին պատի կէսը բռնել էր մի ահագին սևացած իւղաներկ պատկեր, որ ներկայացնում էր ծաղիկներ, պտուղներ, մի կտրած ձմերուկ, մի վարազի ցուռ և գլխի վայր կախ ընկած մի բադ: Առաստաղի մէջ տեղից կախած էր մի ջահ, կտաւէ շապկի մէջ, որ փոշուց նմանել էր ապրեշումի բոժոժի, շերամը միջին: Սենեակի անկիւնում յատակի վրայ դիզւած էին այնպիսի բաներ, որոնք աւելի կոպիտ են և արժանի չեն սեղանների վրայ դրւելու: Թէ ինչ կար իսկապէս այդ դէղի մէջ՝ դժւար էր որոշել, որովհետև նրա վրայ այնքան առատ փոշի կար, որ ամեն մի դիպչողի ձեռքերը ձեռնոցի նման էին դառնում: Միւս բաներից աւելի նկատելի կերպով դուրս էր ցցւած փայտէ թիակի մի կտորած կտոր և մի կօշիկ հին տակ: Երբէք չէր կարելի ասել, թէ այս սենեակի մէջ կենդանի արարած ապրում լինէր, եթէ նրա ներկայութիւնը չը յայտնէր սեղանի վրայ ընկած հին, մաշւած գիրքագրակը:

Մինչ նա դիտում էր այդ ամբողջ տարօրինակ կահաւորութիւնը, կողքի դուռը բացւեց և ներս մտաւ միւկնոյն կլիւշնիցան, որին հանդիպել էր նա բակում: Բայց այստեղ նա տեսաւ,

որ դա աւելի շուտով կլիւնիկ¹⁾ էր, քան թէ կլիւնիցաւ Կլիւնիցան զոնէ մօրուք չի ածելում։ Իսկ սա, ընդհակառակն, ածելում էր, և, երևում էր, բաւական ուշ ուշ, որովհետեւ նրա ամբողջ ծնոտը և աչտերի վարի մասերը նման էին երկաթէ թիւերից շինած քերոցի, որով ախոռում ձիերին են թիմարում։ Ձիչիկովը իւր դէմքին հարցական արտայայտութիւն տալով, անհամբեր սպասում էր, թէ կլիւնն ինչն ինչ է ուզում իրան ասել։ Կլիւնիկն էլ իւր կողմից էր սպասում, թէ Ձիչիկովն ինչ է ուզում իրան ասել։ Վերջապէս վերջինս, այսպիսի տարօրինակ տարակուսանքի վրայ զարմացած, վճռեց հարցնել։

— Հը՛, աղէն տմնն է, ինչ է։

— Այստեղ է տանտէրը, ասաց ծառան։

— Ո՞ւր է հապա, կրկնեց Ձիչիկովը։

— Կնչր ես, ինչ է, ան մարդ, ասաց կլիւնիկը։ — Վա՛, ախր տանտէրը ես եմ, է։

Այստեղ մեր հերոսը ակամայց յետ յետ գնաց և զննողաբար նայեց նրան։ Քիչ չէր պատահել նրան ամեն տեսակ մարդ տեսնել, մինչև անգամ այնպիսին, որպիսին մեզ ու ընթերցողին գուցէ երբեք չը պէտք է վիճակի տեսնել, բացց սրա պէսը դեռ նա չէր տեսել։ Նրա դէմքն առանձին ոչինչ չէր ներկայացնում, նա համարեա այնպէս էր, ինչպէս շատ նիհար ծերունիներինն է լինում։ Միայն ծնոտը շատ էր դուրս ցցւած, այնպէս որ ամեն անգամ թքելիս նա պէտք է թաշինակով ծածկէր, որպէս զի թուքը ծնոտին չընկնէր։ Նրա փոքրիկ աչիկները չէին մարել և սլւլում էին թաւուտ ունքերի տակից մկների նման, երբ նրա սուր քթերը մութ ծակերից դուրս հանած, ականջները տնկած և բեխերը շարժելով մտիկ են տալիս, թէ կատուն կամ չարածճի երեսան մի տեղ չէն թաք կացել արդեօք, և կասկածանքով նոյն իսկ օդն են հոտոտում։ Աւելի ևս նշանաւոր էր նրա սլաճուճանքը։ Ո՛չ մի միջոցով, ոչ մի ջանքով չէր կարելի գլուխ հանել թէ նրա խալաթն ինչից էր թխւած։ Թեւերն ու կուրծքը այնքան էին իւղոտել և փայլում, որ դառել էին իւֆտ, որից կօշիկ են կարում։ Յետևից, փոխանակ երկուսի, չորս փէշ էր քաշ գալիս, որոնց միջից բամբակը

¹⁾ Ключникъ—բանալիների պահող տղամարդ-ծառար։

քուլայ քուլայ դուրս էր ընկնում: Վզին ևս այնպիսի մի բան էր փաթած որ իսկի էր կարելի ջոկել՝ դուլայ էր, կապիճ էր, թէ փորկապ. միայն փողպատ՝ երբէք. մի խօսքով, եթէ Ձիւիկովը նրան այդպէս պնդազարդած տեսնէր մի տեղ եկեղեցու դրան առաջ, հաւանական է, որ նրան մի սե գրօշ տար, որովհետեւ, ի պատիւ մեր հերոսի պէտք է ասել, որ նա ողորմած սիրտ ունէր և երբէք չէր կարող դիմանալ, որ խեղճին մի գրօշ չը տար: Բայց նրա դէմը կանգնողը աղքատ չէր. նրա դէմը կանգնողը կալածատէր էր. այդ կալածատէրն ունէր հազարից աւելի հողի. և թող մէկը փորձէր ուրիշի մօտ գտնել այնքան հաց, թէ ցորեն և թէ ալիւր, և հէնց ուղղակի դիզած, ուժ մատանները, շտեմարանները, չորցնելու տեղերը լիքը լցած լինէին այնքան կտաւով, մահուով, թէ պատրաստած և թէ կիսապատրաստ ոչխարի մորթով, չորացրած ձուկով և ամեն տեսակ բանջարեղէնով ու մսեղէնով: Հապա որ մարդ մտնէր նրա բանտրների բակը, որտեղ շինած ու պաշար դրած էր ամեն տեսակ փայտեղէն ու իսկի չը բանեցրած ամանեղէն, նրան այնպէս կերեւար, թէ է՛ն ընկել արդեօք Մոսկւայի ատաղձագործների քարւանսարան, ուր ամենայն օր ժիր զոքանչները և սկեսուրները խոհարարուհիներին յետները ձգած՝ ուղեորութեմ են իրանց տնտեսական պատրաստութիւնները տեսնելու, և որտեղ ամեն տեսակ փայտեր՝ կարած, տաշած, ռանդած, հիւսւած, սարի պէս իրար վրայ դիզւած սպիտակին են տալիս. էլ տակառ, էլ զալ, էլ կպրաման, էլ տիփար, էլ ջրի կուժ, էլ սանդիլք, էլ աթոռ, էլ խնոցի, էլ հացի տաշտ, էլ լացքի տաշտ, որտեղ կանայք ինչ ասես դնում են. բարակ, ծւած կորափիւրջ¹⁾ շինած արկղներ, կեռ կեղևից հիւսւած զամբիւղներ և ուրիշ շատ ու շատ բաներ, որոնք ծառայում են հարուստ և աղքատ ռուս աշխարհի պէտքերին: Թւում էր, թէ Պլիւշկինի ինչին էր հարկաւոր փայտեղէնի այսպիսի ահադին քանակութիւնը: Ամբողջ կեանքում, մինչև անգամ այդ կալածի պէս երկուսն էլ ունենար, չէր կարող այդքան բանը գործածել. բայց նրան այդ էլ քիչ էր երեւում: Սրանով չը բաւականանալով, նա դեռ ամենայն օր ման էր գալիս իւր դիւղի փողոցներում, աչք էր ածում կամուրջների և առուների վրայ ձգած

¹⁾ Оспа. քառանկյունաձև զարդաքանդակաւոր փայտեղէն:

դերաններին տակ և ինչ որ աչքին ընկնում էր,—կօշկի հին տակ, կնոջ վալաս, երկաթէ մեխ, կաւէ ամանի կտոր,—բոլորը կրում էր տուն և դարսում այն դէպի վրայ, որ Զիշիկովը նկատել էր սենեակի անկիւնում «Տեսէք, էլի ձկնորսը դուրս եկաւ որսի», ասում էին դիւղացիք, երբ տեսնում էին նրան որսի գնալիս։ Եւ արդարեւ, նրանից յետոյ այլ ևս հարկաւոր չէր փողոցն աւելել։ Պատահեց, որ ձիով անցնող սպան խթանը կորցրեց. այդ խթանը մի ակնթարթում ուղեւորեց դէպի ծանօթ դէզը։ Եթէ մի կինարմատ պատահմամբ ջրհորի մօտ դռնը մոռանում էր, նա թըռցնում էր և դռնը։ Ասենք եթէ դիւղացին նկատում էր և հէնց տեղն ու տեղը երեսովը տալիս՝ նա չէր վիճում և դողացած բանը վերադարձնում էր. բայց եթէ այդ բանը մի անգամ ընկնում էր դէպի մէջ, ամեն ինչ պրծած էր։ Նա երդում էր ուտում, թէ այդ բանն իրանն է, գնել է այս ինչ ժամանակ այս ինչ մարդուց, կամ պատկենական է։ Իւր սենեակում նա վերցնում էր յատակից ինչ որ տեսնում էր՝ զմուռ, թղթի կտոր, փետուր, և այդ ամենը գնում էր գրասեղանի վրայ կամ պատուհանում։

Բայց կար ժամանակ, երբ նա միայն խնայող տանտէր էր, տմուկացած և ընտանիքի հայր. հարեանն էլ զալիս էր նրա մօտ ճաշելու, լսելու և նրանից տնտեսութիւն և իմաստուն խնայողութիւն սովորելու։ Ամեն ինչ արագ էր գնում, ամեն ինչ կատարում էր չափած ընթացքով։ Բանում էին ջրաղացներն ու թաղիքի գործարանները, բանում էին և մահուդի գործարանները, հիւանի դազդեահը ¹⁾, մանարանները. ամեն տեղ, ամեն բանի մէջ թափանցում էր տանտիրոջ սրատես հայեացքը, և նա աշխատասէր սարդի նման հողատար ու ժիրաժիր վազվզում էր իւր տնտեսական ոտապնի բոլոր ծայրերը։ Ձափազանց բուռն զգացումներ չէին արտայայտւում նրա դէմքի գծերի վրայ, բայց աչքերի մէջ լսելք էր երևում։ Նրա խօսքերը ցոյց էին տալիս, որ փորձառու և աշխարհից հասկացող մարդ է, և հիւրի քէֆն էր զալիս նրան լսելիս։ Սիրաշահ և քաղցրախօս տանտիկինը հռչակած էր իբրեւ աղ ու հացով կին. դէմ էին զալիս երկու սիրունատես աղջիկներ, երկուսն էլ վարդի նման թարմ ու շէկ. դուրս էր վազում որդին, մի կայ-

¹⁾ Ставокъ.

տառ երեխայ և բոլորի հետ համբուրւում էր. նրա այնքան պէտքը
էր թէ հիւրը դրա համար ուրախ կը լինի թէ ոչ. Տան մէջ բոլոր
լուսամուտները բաց էին. վերնատանն ապրում էր Ֆրանսիացի ու-
սուցիչը, որ փառաւոր ածելւում էր և նշանաւոր հրացանաձիգ էր.
նա միշտ փայտամորիկ կամ բադ էր բերում ծաշի համար, երբեմն
էլ միայն ծննդկան ձու, և պատուիրում էր, որ իրան համար ձւաձեղ
պատրաստեն, որովհետեւ ամբողջ տանը այլ ևս ուրիշ ուտող չը կար-
վերնատանը կենում էր և նրա հայրենակիցը՝ երկու աղջիկների. դաս-
տիարակուհին: Ինքը տանտէրը ծաշի էր նստում թէև մի քիչ մաշ-
ւած, բայց կոկիկ սերթուկով. արմուկները կարգին էին. ոչ մի տեղ
մի կարկատան չը կար: Բայց բարի տանտիկինը մեռաւ. բանա-
լիքների և նրանց հետ միասին մանր մոնր հոգսերի մի մասն ան-
ցաւ տանտիրոջը: Պիւշկինն աւելի անհանգիստ դարձաւ և, ինչպէս
բոլոր աչրիները, աւելի կասկածոտ և աւելի ժլատ: Մեծ դստերը,
Ալէքսանդրա Ստեպանովնային նա չէր կարող ամեն բան հաւատալ,
և իրաւունք էլ ունէր, որովհետեւ Ալէքսանդրա Ստեպանովնան շու-
տով փախաւ Աստաժ գիտէ որ հեծելազօր զնդի շտաբս-րոտմիստրի
հետ և վրապիտու պսակեց մի տեղ՝ փայտեայ եկեղեցու մէջ, իմանա-
լով որ հայրը չի սիրում սպաներին այն տարօրինակ նախապաշարումով,
իբր թէ բոլոր զինւորականները թղթամոլ և շռայլ մարդիկ են: Հայրը
նրան ուղարկեց նրա յետեւից իւր անէճքը, բայց հոգ չը տարաւ
յետեն ընկնելու: Տունն աւելի ևս դատարկեց: Տանտիրոջ մէջ աւելի
նկատելի կերպով սկսեց արտայայտել ժլատութիւնը: Կոշտ մազերի
մէջ տեղ-տեղ սպիտակին տուղ ալիքը, ժլատութեան հաւատարիմ
ընկերը աւելի նպաստեց նրա զարգանալուն: Ֆրանսիացի ուսուցիչն
արձակեց, որովհետեւ որդու ծառայութեան մտնելու ժամանակն
հասել էր. մահամ ն արտաքսեց, որովհետեւ յայտնեց նրա ոչ ան-
մեղութիւնը Ալէքսանդրա Ստեպանովնայի փախստի մէջ: Որդին ու-
ղարկւած լինելով նահանգական քաղաք, որպէս զի պալատում, հօր
կարծիքով, հիմնաւոր պաշտօնավարութիւն սովորի. դրա փոխարէն
մտաւ զնդի մէջ և արդէն մտնելուց յետոյ հօրը գրեց և փող խնդ-
րեց համազգեստի համար: Շատ բնական է, որ նա ստացաւ այն,
ինչ որ հասարակ ժողովրդի մէջ ասւում է տոններու: Վերջապէս
վերջին դուստրը, որ նրա հետ մնացել էր տանը, մեռաւ. ծերու-

Նին մնաց մենակ իբրև զարաւուլ, իբրև սահապան և իբրև տէր իւր հարստութիւններէ: Մենաւոր կեանքը առատ սնունդ էր մատակարարում ժլատութեանը, որ, ինչպէս յայտնի է, սոված զայլի է նման, և որքան շատ է լավում՝ այնքան աւելի անկուշտ է դառնում: Մարդկային զգացումները, որ առանց նրան էլ նրա մէջ այնքան խոր չէին, բոլէ առ բոլէ նոսրանում էին, և օր չէր անցնում, որ մի բան չը կորէր այդ մաշած աւերակի մէջ: Հակառակի պէս հէնց այդ ժամանակ, կարծես դիտմամբ հօր կարծիքը զինւորականների մասին հաստատելու համար, որդին թղթախաղի մէջ տարւեց. նա ուղարկեց նրան սրտի խորքից իւր հայրական անէծքը և այլ ևս երբէք չը հետաքրքրեց իմանալու, թէ արդեօք նա զոյգութիւն ունի աշխարհում, թէ ոչ: Տարւէ տարի նրա տան պատուհանները փակւում էին, վերջապէս մնաց միայն երկուսը, որոնցից մէկը, ինչպէս արդէն ընթերցողը տեսաւ, թղթած էր: Տարւէ տարի աչքից կորչում էին իւր տնտեսութեան աւելի զխաւոր մասերը, և նրա կարճատես հայեացքը պտոյտ էր զալիս թղթի կտորտանքի և փետուրների շուրջը, որ նա հաւաքում էր իւր սենեակում: Այլ ևս չէր զիջանում գնորդներին, որոնք զալիս էին նրանից տնտեսական արդիւնաբերութիւններ գնելու. նրանք սակարկում էին, սակարկում, և վերջապէս նրան բոլորովին թողին, ասելով, թէ նա սատանայ է, մարդ չէ: Հացն ու խոտը փտում էին, դեղերն ու շեղջերն իսկ և իսկ աղբ էին դառնում, թէկուզ նրանց վրայ կաղամբ տնկիր. ալիւրն ամբարներում քարացել էր, պէտք էր կտորտել. մահուդեղէնին, կտաւեղէնին և ուրիշ անայլին նիւթերին մարդ վախենում էր ձեռք տալ, նոքա փոշիանում էին: Նա ինքն էլ արդէն մոռանում էր, թէ ինչից ինչքան ունէր. չիշում էր միայն, թէ պահարանում ինչ տեղ է դրած շիշը, մէջը մի ինչ որ համեմուն խմիչքի մնացորդ, որի վրայ ինքը նշան էր արել, որ չը լինի թէ մէկը զողտուց խմէ. չիշում էր նաև, թէ որտեղ է դրած փետուրը կամ զմուռի կտորը: Այն ինչ կալածում եկամուտը հաւաքւում էր առաջւայ պէս. նոյնքան հարկ պէտք է վճարէր զիւղացին, նոյն չափով ընկոյզ պարտական էր բերել ամեն մի կիւ, նոյնքան թով կտաւ. պէտք է գործէր կտաւադործը: Այս բոլորը լցւում էր ամբարներում, բոլորը փտում ու կերւածք էր դառնում, նա ինքն էլ վերջա-

պէս դարձաւ մի տեսակ կարկատանի տեղ մարդկութեան վրայ: Ալէքսանդրա Ստեպանովնան ինչ որ մի երկու անգամ եկաւ փոքրիկ որդեակի հետ, աշխատեց որ կարողանայ մի բան ստանալ: Երեւում էր, որ աստանդական կեանքը շտաբա-բոտմիստրի հետ այնպէս զրաւիչ չէր, ինչպէս երեւում էր հարսանիքից առաջ: Պիւշկինը այնու ամենայնիւ նրան ներեց և մինչև անգամ փոքրիկ թոռանը մի ինչ որ կոչակ տւեց հետը խաղալու, որ ընկած էր սեղանի վրայ, բայց փող ոչինչ չը տւեց: Մի ուրիշ անգամ Ալէքսանդրա Ստեպանովնան եկաւ երկու երեխաների հետ և հօրը բերեց քաղցր պակսիմատ թէյի համար և մի նոր խալաթ, որովհետեւ հօր հագին այնպիսի մի խալաթ կար, որ մարդ վրան նայելիս ոչ միայն խղճում էր, այլ մինչև իսկ ամաչում էր: Պիւշկինը երկու թոռներին էլ փայլապեց, և նստեցնելով մէկին աջ, միւսին ձախ ծնկան վրայ, խաղացրեց ծիշդ այնպէս, կարծես ձի նստած լինէին. պակսիմատն ու խալաթն ընդունեց, բայց աղջկան ոչինչ չը տւեց: Ալէքսանդրա Ստեպանովնան հէնց այնպէս էլ գնաց:

Ահա թէ ինչպիսի կալածատէր էր կանգնած Զիլիկովի առջևը: Պէտք է ասել, որ այսպիսի երեւոյթ շատ հազադիւր է ռուսական աշխարհում, որտեղ ամեն ինչ աւելի շուտով սիրում է փուռել, քան թէ կուշ գալ, և այս երեւոյթը աւելի էլ աչքի է ընկնում, որ հէնց այդտեղ կը գտնուի հարեանութեան մէջ մի կալածատէր որ քէֆ է անում, ինչպէս միայն ռուս պոմաշչիկը գիտէ բաց սրտով թունդ քէֆ անել և, ինչպէս ասում են, կեանքի հախիցն է զալիս: Առաջին անգամ անցնողը ապշած կանդ է առնում նրա բնակարանը տեսնելիս և չի իմանում թէ այդ ինչ իրաւատէր իշխան է յանկարծ լոյս ընկել մանր անցացտ կալածատէրերի մէջ: Նրա սպիտակ, քարաշէն սները անթիւ ծխնեղոյններով, բեւեղերներով, շրջապատւած մի խումբ ֆիլիզելներով, հողմացոյցներով և եկաւոր հիւրերի համար ամեն տեսակ օթեւաններով, կարծես պալատներ լինեն: Խոնչ ասես չունի նա. թատրոններ, լընճոյքներ, ամբողջ գիշերը լուսավառւում է ճրագներով ու լապտերներով զարդարած պարտէզը, որտեղ զգրդում է երաժշտութիւնը: Նահանգի կէսը զուգւած և ուրախ զբօսնում է ծառերի տակ և այս բռնազբօսիկ լուսաւորութեան մէջ ոչ ոքի վայրենի և ահաւոր:

չի թւում, երբ տերեւախիտ ծառերի միջից հանդիսաւոր կերպով դուրս է ցցւում կեղծ լուսով լուսաւորւած ճիւղը, զրկւած իւր վառ կանաչ գոյնից, իսկ վերեւում աւելի մութ և աւելի մռայլ և քսան անգամ աւելի ահաւոր է երևում այդ լոյսի միջով գիշերային երկինքը, և հեռու, բարձրումը, ծառերի մռայլ զազաթները աւելի խոր մղւած անթափանցելի խաւարի մէջ, տերևները շարժելով, սրղոզում են ներքեւից իրանց բները լուսաւորող այս կեղծ ոսկու փայլի վրայ:

Մի քանի րոպէ արդէն կանգնած էր Պլիւշկինը առանց մի բառ ասելու, իսկ Ձիչիկովը, թէ տանտիրօջ տեսքից և թէ սենեակում եղած բոլոր բաներից զրաււած, չը կարողացաւ խօսք բաց անել:

Երկար նա չը կարողացաւ զսնել, թէ ինչ խօսքերով բացատրէ իւր այցելութեան պատճառը: Հէնց այն է ուզում էր այս միտքն յայտնել, թէ լսելով նրա առաքինութեան և նրա հոգու հազապիւտ յատկութիւնների մասին, պարտք է համարել անձամբ մատուցանել իւր յարգանքների հաւաստիքը, բայց, կանգ առաւ, և զգաց, որ այդ չափազանց է: Նորից մի կողմնակի ակնարկ ձգեց սենեակում եղած բոլոր իրերի վրայ և զգաց, որ առաքելնութիւն և հոգեկան հազապիւտ յատկութիւններ խօսքերը շատ յաջող կերպով կարելի է փոխարինել տնտեսութիւն և կարգ ու կանոն խօսքերով, ուստի ճառն այսպէս ձևափոխելով ասաց, թէ լսելով նրա տնտեսութեան և կալւածների հազապիւտ կառավարութեան մասին, պարտականութիւն է համարել նրա հետ ծանօթանալ և անձամբ մատուցանել իւր յարգանքների հաւաստիքը: Ի հարկէ, կարելի էր ուրիշ, աւելի լաւ պատրասկ բերել, բայց այդ ժամանակ մոքին ուրիշ ոչինչ չեկաւ:

Այս խօսքի վրայ Պլիւշկինը շրթունքներով մի բան մրմռաց, որովհետեւ ատամ չունէր.— թէ ինչ՝ իսկապէս յայտնի չէ, բայց հաւանօրէն միտքն այս էր՝ «զրոյդը տանի քեզ էլ, քո յարգանքն էլ»:

Բայց քանի որ մեր մէջ հիւրասիրութիւնն այնքան ընդունւած է, որ կծծին չի կարող նրա օրէնքներից դուրս գալ, ուստի նա իսկոյն աւելացրեց քիչ աւելի որոշ.— խոնարհաբար խնդրում եմ նստէք: Ես վաղուց է հիւրեր չեմ տեսնում, ասաց նա,— և, խոստովանանք լինի, նրանց մէջ օգուտ քիչ եմ տեսնում: Ամենաանվայել սովորու-

թիւն են գցել. իրար մօտ հիւր են գնում, իսկ տնտեսութիւնը երեսի վրայ թողնում... արի ու նրանց ձիերին էլ խոտ տուր: Ես վաղուց արդէն ճաշել եմ, իսկ իմ խոհանոցը շատ ցած է, անպիտան, ծըլ-նելոյցն էլ բոլորովին քանդել է՝ վառես՝ վայ թէ հրդեհ ընկնի:

«Այ քեզ օյին», մտածեց ինքն իրան Զիւլիկովը. — էլաւ որ Սաբակելիի մօտ մի հատ թանրլիթ¹⁾ ու մի կտոր ոչխարի կող կերայ:

— Թարսի պէս ամբողջ կալածում մի դաստա խոտ էլ չի ճարւում, շարունակեց Պիւշկինը: Եւ ճշմարիտ, ինչպէս յետ գցես. մի փոքրիկ կտոր հող է, գիւղացին՝ ծոյլ աշխատել չի սիրում, հէնց մտածում է, թէ ոնց անէ, որ գինետուն ընկնի... Մէկ էլ տեսար ծերութեանս օրերում սկսեցի ողորմութիւն անել:

— Բայց ես լսել եմ, համեստ կերպով նկատեց Զիւլիկովը, որ դուք հազար հոգուց աւելի ունիք:

— Այդ ո՞վ ասաց: Մի լաւ թքէիք ասողի երեսին: Նա հանաքչի մարդ է եղել, երևի ուզեցել է ձեզ կատակ անել: Բան են ասում — հազար հոգի. հապա մի գնա համարի, ոչինչ էլ չես գտնիլ: Այս վերջին երեք տարում անիծած տենդից զիտես ինչքան գիւղացի մեռաւ:

— Ի՞նչ էք ասում, շնոտ մեռան, բացականչեց Զիւլիկովը ցաւակցաբար:

— Այո՛, շնոտ շատ:

— Խնդրեմ ասէք՝ քանի հոգի կը լինէին:

— Ութսուն հոգի:

— Ձէ:

— Խո՞ւմ չեմ խաբում, եղբայր:

— Խնդրեմ ասէք. կարծեմ այդքան հոգի դուք հաշւում էք վերջին թահամարից սկսած:

— Այդպէս որ լինէր՝ էլի փառք էր, ասաց Պիւշկինը. — այն ժամանակներից եթէ հաշւենք՝ հարիւր քսան էլ կը լինի:

— Դրո՞ւստ, ամբողջ հարիւր քսան, բացականչեց Զիւլիկովը և մինչև անգամ զարմանքից բերանը փոքր ինչ բաց արեց:

— Այս ծերութեան հասակիս խո՞ւմ սուտ խօսելու չեմ. եթանա...

¹⁾ Вотрушка.

սուն տարիս մօտենում է, ասաց Պլիշկինը: Նա, երևում էր, վիրաւորեց այսպիսի համարեա ուրախ բացականչութիւնից: Ձիշիկովը նկատեց, որ արդանրե անվայել է այդպիսի անկարեկցութիւն դէպի Երիշի ցաւը, ուստի հէնց խսկոյն հառաչեց և ասաց, թէ ի սրտէ ցաւակցում է:

— Դէ Երիշի ցաւակցութիւնից դրպանիս ինչ օգուտ, ասաց Պլիշկինը: Այ, այստեղ իմ կողքին կենում է մի կապիտան. սատանան գիտէ իրտեղից լուս ընկաւ. ասում է ազգականս է, չքուի ջան, քեռի, ձեռս էլ է պաշում. բայց որ սկսում է ցաւակցել, այնպիսի մի վայնասուն է հանում, թէկուզ ականջներդ փակիր: Երեսը կաս կարմիր, երևի սարսափելի շատ է խմում: Երևում է սպայ ժամանակը փողերը վատնել է, կամ Թատրոնի դերասանուհին է կորզել, հիմա էլ գալիս ցաւակցում է:

Ձիշիկովն աշխատեց բացատրել, որ իւր ցաւակցութիւնը բոլորովին նման չէ կապիտանի ցաւակցութեանը, որ ինքը ոչ միայն լոկ խօսքով, այլ և զործով պատրաստ է ապացուցանելու, և հէնց խսկոյն, առանց դէս ու դէն ընկնելու, պատրաստականութիւն յայտնեց իւր վրայ առնելու այդպիսի դժբաղդ պատահարներով մեռած բոլոր դիւղացիների փոխարէն հարկ տալու պարտականութիւնը: Այս առաջարկութիւնը, երևում էր, բոլորովին ապշեցրեց Պլիշկինին. նա աչքերը չռած երկար նայում էր նրան և վերջապէս հարցրեց. — Դուք, բարեկամ, զինուորական ծառայութեան մէջ խոմ չէք ծառայել:

— Ո՛չ, պատասխանեց Ձիշիկովը, բաւական նենգամիտ կերպով.

— Վարել եմ քաղաքացիական պաշտօն:

— Քաղաքացիական, կրկնեց Պլիշկինը և սկսեց շրթունքները ծամ-ծըմել, կարծես թէ մի բան էր ուտում. բայց ի՞նչպէս. չէ որ դա ձեզ ֆէաս է:

— Ձեր բաւականութեան համար պատրաստ եմ ֆէաս էլ կրելու:

— Ա՛խ, բարեկամ, անի իմ բարերար, բացականչեց Պլիշկինը, ուրախութիւնից չընկատելով, որ շատ անճոռնի կերպով քթից կախ էր ընկել բռնօթին Թանձր սուրճի նման, և խալաթի փեշերը յետ գնալով երևան էին հանում շորերը, ոչ բոլորովին վայել նայելու համար. — Այ, միտթարեցիք ծերուկիս. անի, Աստուած իմ, անի, Աստուած իմ... Պլիշկինն այլ ևս չը կարողացաւ խօսել: Բայց մի

վայրկեան չանցած, այս ուրախութիւնը, ինչպէս մի ակնթարթում արտայայտուել էր նրա փայտեայ երեսի վրայ, այնպէս էլ մի ակնթարթում անցաւ, կարծես իսկի չէր էլ եղել, և նրա դէմքը դարձեալ ընդունեց բազմահոգ արտայայտութիւնս՝ նա մինչև անգամ թաշկինակով քիթը սրբեց, թաշկինակը փաթաթեց մի կծիկ արեց և սկսեց տանել բերել վերին շրթունքի վրայ:

— Ինչպէս ուրեմն, թող տւէք հարցնել. խնդրեմ չը բարկանաք. դուք յանձն էք առնում ամեն տարի նրանց փոխանակ հարկ վճարել. իսկ փողերն ի՞նչ կը յանձնէք թէ զանձարանին:

— Այ, մենք ինչպէս կ'անենք. նրանց համար վաճառադիր կը կազմենք, իբր թէ նրանք կենդանի են և իբր թէ դուք նրանց ծախում էք ինձ:

— Հա, վաճառադիր... ասաց Պիւշկինը, մաքրի մէջ ընկաւ և սկսեց շրթունքները ծամ-ծմել. ախր վաճառադիր, վաճառադիրն էլի ծախս կուզի: Մառայողներն էլ այնպէս անխիղճ են որ: Առաջւայ ժամանակը լինէր, յիսուն կոպէկ սե փող կը տայիր, մի տոսրակ էլ ալիւր կ'ուղարկէիր, բանդդ գլուխ կը զար. իսկ հիմա մի ամբողջ բեռ կորկոտ-ձաւար ուղարկիր, դեռ մի կարմիր թուղթ էլ հետը. այսպէս էլ արծաթախրութիւնս Ես չեմ իմանում, թէ ինչպէս ուրիշ ոչ ոք սրա վրայ ուշադրութիւն չի դարձնում: Գոնէ նրանց մի փրկարար խօսք կասէին: Ձէ որ փրկակար խօսքն էլ մեծ բան է: Ո՛վ ինչ ուզում է, թող ասէ, փրկարար խօսքին ոչ ոք չի կարող դէմ կենալ:

Ասենք դու դէմ կը կենաս, ինքն իրան մտածեց Չիլիկովը, և իսկոյն ասաց, որ նրան յարգելուց ինքը պատրաստ է մինչև անգամ վաճառադրի ծախսերն էլ իւր վրայ առնելու:

Լսելով, որ մինչև անգամ վաճառադրի ծախսերն էլ իւր վրայ է առնում, Պիւշկինը եզրակացրեց, թէ հիւրը կատարեալ յիմար պէտք է լինի և միայն ձեւացնում է թէ քաղաքացիական պաշտօն է վարել. բայց հաւանական է, որ սպայ է եղել և քաշ է եկել դերասանուհիների յետևից: Սակայն և այնպէս նա չը կարողացաւ ուրախութիւնը թաքցնել և ամեն տեսակ մխիթարութիւն մաղթեց ոչ միայն նրան, այլ մինչև իսկ նրա զաւակներին, առանց հարցնելու զաւակ ունի թէ ո՛ւր Յետոյ մօտեցաւ պատուհանին, մատներով ապակին թխկթխկացրեց և ձայն տւեց. «է՛յ, Պրոշկա: Մի

բոսայեց յետոյ լաւեց, որ մէկը շտապ շտապ ներս վազեց նախասենեակը. երկար այնտեղ քսքսւում, կօշիկներով թխկթխկացնում էր. վերջապէս դուռը բացւեց և ներս մտաւ Պրոշկան, մի տասներեք տարեկան տղայ, հագին այնպիսի մեծ կօշիկներ, որ քայլելիս քիչ էր մնում ոտքերը միջից դուրս դաշին: Թէ ինչու Պրոշկան այդպիսի մեծ կօշիկներ էր հագել, կարելի է հէնց իսկոյն իմանալ: Պլիւշիկինի բոլոր ծառաների համար, ինչքան որ տանը կային, մի զոյգ կօշիկ կար միայն, որ միշտ պէտք է մնար նախասենեակում: Ով որ կանչւում էր աղաչի սենեակը, սովորաբար ամբողջ բակը բոպիկ էր չափում, բայց մոնելով նախասենեակ, կօշիկներն հագնում էր և այնպէս վաշելու-չ կերպով մոնում սենեակ: Սենեակից դուրս գալիս կօշիկները դարձեալ թողնում էր նախասենեակում և դարձեալ զնում ոտարօպիկ: Եթէ մէկը աշնան ժամանակ պատուհանից նայէր, մանաւանդ երբ առաւօտներն սկսում է քիչ քիչ եղեամի դնել, կը տեսնէր, որ բոլոր ծառաները այնպէս են վեր ցատկոտում, որ թատրոններում ամենալաւ պարողն իսկ զժար թէ կարողանաց նրանց պէս թռիչքներ անել:

— Հապս մի սրա աջաթին մօիկ տւէք, ասաց Պլիւշիկինը Զիլիկովին, մատով Պրօշկայի երեսը ցոյց տալով. — փայտի պէս խոմ չլմար է. բայց փորձի համար մի բան դրէք, մի ակնթարթում կը թռցնէ: — Ասա ինչու եկար, չիմնր, ինչու: — Այստեղ նա մի փոքր լռեց, որին Պրոշկան պատասխանեց նոյնպէս լուռ թեամբ: — Սամուլարը դցիր, լսում ես: Այս բանալին էլ առ տուր Մաւրային, թող գնաց մառանը, այնտեղ դարակում քաղցր պաքսիմատ կաց, Ալէքսանդրա Ստեպանովնայի բերածը. — թող թէյի հետ բերեն... Սպասիր, ուր ես գնում, աւանակ, ան դու աւանակ... Ոտքերիդ մէջ սատանայ է մտել ինչ է... Դեռ մի լսիր: Կարելի է պաքսիմատը երեսից փչացած լինի. թող դանակով քերէ. փշրանքը դէն չածէ, այլ տանի հաւանոցը: Տես անց, դու մառանը չը մոնես, եթէ ոչ գիտնա քեզ ինչ կանեմ. ցախաւելով կը ծեծեն, որ համով լինի. հիմա խոմ ակորժակդ լաւ է՝ որ տւելի լաւ լինի: Հապս մէկ փորձիր մառան մօր. իսկ ես այդ ժամանակ պատուհանից կը նայեմ: — Դրանց ոչինչ չի կարելի հա: տաւ, շարունակեց նա, դառնալով Զիլիկովին, երբ արդէն Պրոշկան քաշեց գնաց իւր

կօշիկներով միասին: Սրանից յետոյ նա սկսեց Զիւլիկովի վրայ էլ կասկածանքով նայել: Այսպիսի արտասովոր մեծահոգութիւնը սկսեց նրան անհաւատալի թւալ, և նա ինքն իրան մտածեց. «բայց սատանան գիտէ, կարելի է հէնց մի պարծենկոտ մարդ է, ինչպէս այդ բոլոր զեղի ու շռայլ մարդիկ. ստեր կը փշի որպէս զի խօսի, թէյ խմի, յետոյ կը վերկենայ ու կերթայ»: Ուստի, նախազգուշութեան համար, բացի դրանից կամենալով նրան մի քիչ փորձել, ասաց, որ վատ չէր լինիլ վաճառագիրը շուտով կազմելի, որովհետեւ մարդու վրայ յոյս դնել չի կարելի, այսօր կայ, էգուց Աստուած գիտէ:

Զիւլիկովը պատրաստականութիւն յայտնեց հէնց այդ բոլորէն կազմելու և պահանջեց միայն բոլոր գիւղացիների ցուցակը:

Այս բանը հանդատացրեց Պլիւշկինին: Երևում էր, որ նա մտածում էր մի բան անել, և արդարեւ վեր առաւ բանալիները, մօտեցաւ պահարանին և, մի փեղկը բանալով, երկար խառնխոտեց բաժակներն ու ամանները և, վերջապէս, ասաց.— Տես է, չես էլ դտնում: հիանալի լիքէօր ունէի, եթէ միայն չեն խմել. բոլորը դողեր են: Ահա, այս չէ արդեօք:— Զիւլիկովը տեսաւ նրա ձեռքին մի փոքր շիշ, ամբողջապէս փոշու մէջ կորած, ինչպէս ֆուֆայկայի մէջ:— Դեռ ողորմածհոգի կինս է պատրաստել, շարունակեց Պլիւշկինը:— Անպիտան կլիւնիցան քիչ է մնացել նրան դէն զցի, մինչև անգամ բերանն էլ չի խցել. անդամս ձանձ, մանձ, ինչ կեղտոտութիւն ասես լցւել էր մէջը. բայց ես աղբը դէն ածեցի, և հիմա, տես, ինչպէս մաքուր է: Ձեզ համար մի բիւմկա ածեմ:

Բայց Զիւլիկովն աշխատեց հրաժարւել այդպիսի լիքէօրից, ասելով, որ ինքը արդէն համ կերել է, համ խմել:

— Արդէն կերել էք ու խմել, ասաց Պլիւշկինը: Դէ ի հարկէ, չաւ հասարակութեան մարդը որտեղ ասես կը ձանաչի. նա առանց ուտելու էլ կուշտ է: Ուրիշ բան են այս անպիտան գողերը. նրանց ինչքան ուզում ես կերակրիր... Ա՛յ, հէնց կապիտանը. մէկ էլ տեսար, եկաւ. «Բեռի ջան, ասում է, մի բան տէք ուտեմ: Իսկ ես նրան նոյնքան քեռի եմ, որքան նա ինձ պապ: Երևի տանը ուտելու ոչինչ չունի, դրա համար էլ ամեն տեղ թրեւ է զալիս:— Հա, ձեզ հարկաւոր է այդ բոլոր ձրիակերների ցուցակը: Ո՞նց չէ. ես

գլխէի և նրանց, բոլորի անունները գրեցի առանձին թղթի վրայ, որ առաջիկայ թւահամարի ժամանակ բոլորն էլ ջնջեմ: Պլիւշկինը ակնոցներն աչքը դրեց և սկսեց թղթերը քրքրել: Տեսակ տեսակ կապոցներ բաց անելիս նա մեծարեց հիւրին այնպիսի առատ փռչիով, որ սա փռչումը: Վերջապէս դուրս հանեց մի թղթի կտոր, ամբողջապէս գրոտած: Նա ծածկւած էր մ'ժեղների նման մանր, խիտ խիտ գրած գիւղացիների անուններով. այնտեղ ո՞վ ասես կար. էլ Պարամանով, էլ Պիմենով, էլ Պանտելէյմոնով, մինչև անգամ երեւում էր մի ինչ որ Գրիգոր Հասիր — Չհասնեսեան: Բոլորը հարիւր քսանից աւել կը լինէին: Այսպիսի մեծ թիւ տեսնելով Ձիւիկովը ժպտաց: Նա թուղթը գրպանը դրեց և յաջանեց Պլիւշկինին, թէ վաճառագիր կազմելու համար նրան հարկաւոր կը լինի գնալ քաղաք:

— Քաղաքը Բայց ինչպէս... հապա տունն ում թողնեմ. իմ մարդիկ զիւրի գողեր են, մի օրում այնպէս կը պլոկեն, որ մի մեկ էլ չեն թողնիլ կաշտան կախելու համար:

— Իսկի ծանօթ մարդ չունիք:

— Ախր ինչ ծանօթ: Իմ ծանօթները բոլորն էլ մեռել են, կամ ծանօթութիւնը կտրել... Հնա, լաւ միտս ընկաւ. ինչպէս չունիմ, ունիմ, բացականչեց նա: Ինքը նախադա՛ր ծանօթ է. առաջւայ տարիները մինչև անգամ տունս էլ էր գալիս: Ի՛նչպէս ծանօթ չէ. մի ամանից էինք ուտում. միասին էինք ցանկապատերից մագլցում: Ի՛նչպէս ծանօթ չէ, այն էլ այնպէս ծանօթ... Ասում ես նրան գրեմ:

— Ի հարկէ, հէնց նրան:

— Ի՛նչպէս չէ. այնպէս ծանօթ է որ, ուսումնարանում լաւ ընկեր էինք: Եւ այդ փայտեայ երեսի վրայ յանկարծ անցաւ մի ջերմ ճառագայթ, արտայայտեց ո՛չ թէ զգացում, այլ զգացման մի աղօտ արտափայլում, մի երեւոյթ, նման այն տեսարանին, երբ անսպասելի կերպով ջրի երեսն է դուրս գալիս խեղդող մարդը, և ափում խռնւած ամբոխի մէջ թնդում է ուրախութեան աղաղակ: Բայց ուրախացած եղբայրներն ու քոյրերը ի զուր ափից պարաններ են զցում և սպասում, թէ չի երեւալ արդեօք կռնակը կամ կռակը: Գողրած թւերը, նա վերջին անգամ երեաց: Ամեն ինչ լուռ է,

և դրանից յետոյ աւելի ահաւոր և աւելի ամայի է դառնում լուին տարերքի հանդարտած մակերևոյթը: Այդպէս էլ Պիւշկինի դէմքը, յանկարծակի արտափայլած զգացումից յետոյ աւելի անզգայ և աւելի դարշելի դարձաւ:

— Սեղանի վրայ մի քառորդ թերթ մաքուր թուղթ կար դրած, ասաց նա, հիմա չը գիտեմ ո՛ր է կորել: Իմ ծառաներն այսպիսի անպիտան մարդիկ են: Այստեղ նա սկսեց որոնել սեղանի տակը, սեղանի վրայ, ամեն տեղ քրքրեց և, վերջապէս, գոռաց. «Մաւրա, ա՛յ Մաւրա»: Նրա ձայնին ներս եկաւ մի կին, ձեռքին մի աման, որի վրայ դրած էր ընթերցողին արդէն ծանօթ պաքսիմատը, և նրանց մէջ տեղի ունեցաւ այսպիսի խօսակցութիւն.

— Ի՞նչ ես արել թուղթը, գո՛ղ աւազակ:

— Աստուած վկայ, աղա՛, չեմ տեսել. մի փոքր կտոր կար միայն, նրանով էլ դուք բարեհաճեցիք ըիւմկան ծածկել:

— Իսկ ես, աչքերիցդ տեսնում եմ, որ թուցրել ես:

— Ախր ինչո՞ւ պէտք է թուցնէի, իմ ինչի՞ն է պէտք. ես գիր գրել չեմ իմանում:

— Սուտ ես ասում. տարել ժամկոչի տղին ես տւել. նա խոմ խաղմըղում է, դրա համար էլ տարել նրան ես տւել:

— Ժամկոչի տղան եթէ ուզենայ, չի կարող իրան համար թուղթ ճարել: Զեր մի կտորին խոմ չի մնացել:

— Լաւ, լաւ, սպասիր, ահեղ դատաստանին դրա համար սատանաները քեզ երկաթէ շամփուրներով կը դաղեն. ա՛յ, կը տեսնես, թէ ճնց կը դաղեն:

— Ինչո՞ւ պէտք է դաղեն, էրբ որ թղթին ձեռք չեմ տւել. Էհ, կինարմատ եմ, կարելի է ուրիշ յանցանք արած լինեմ, բայց ոչոք չի կարող երեսովս տալ, թէ գողութիւն եմ արել:

— Սպասիր, սատանաները կը դաղեն ու կ'ասեն. «տեղն է քեզ, լիրբ անզգամ. աղիդ որ խաբում էիր, լաւ էր: Հէնց տաք տաք շամփուրներով կը դաղեն».

— Իսկ ես կ'ասեմ, չղուր էք դաղում, Աստուած վկայ ձեռք չեմ տւել... Ա՛յ հէնց սեղանի վրայ է ընկած: Ամեն անգամ զուր տեղը նախատում էք:

Պիւշկինը, ճիշտ որ, տեսաւ քառորդ թերթը և մի րոպէ

կանգ առաւ, շրթունքները ծամծմեց և ասաց: Լաւ լաւ, էլ ինչ ես այդքան չարանում: Ինչ բարկացոտն ես: Մի խօսք ասում ես թէ չէ, նա տասն է պատասխանում: Գնա ճրագ բեր, նամակը կ'ընեմ: Դեռ կ'աց, ճրագու մոմ չը բերես: ճրագուն հալող բան է. կը վառի, կը պրծնի և միայն փնաս կը լինի. աւելի լաւ է կ'պցնելիք¹⁾ բերես:

Մաւրան դուրս գնաց, իսկ Պլիւշկինը նստեց բազկաթոռի վրայ, գրիչը ձեռքն առաւ, թղթի կտորը երկար շրջաշրջեց այս ու այն կողմ, մտածում էր, թէ չի կարելի արդեօք կէս անել: Բայց, վերջապէս, համոզուեց որ ձէ մի կերպ չի կարելի, գրիչը թաթախեց թանաքամանի մէջ, որտեղ մի ինչ որ բորբոսնած հեղանիւթ կար, տակն էլ ահագին քանակութեամբ ճանձեր, և սկսեց գրել. այնպիսի տառեր էր շարում, որ նման էին երաժշտական ձայնանիշների, բոպէ առ բոպէ ձեռքի ընթացքը բռնում էր, որ ոստոստում էր ամբողջ թղթի վրայ, խնայողաբար տողը տողին էր կ'պցնում և ափսոսանքով մտածում էր, որ դեռ շատ տեղ էլ բաց է մնում:

Եւ այս աստիճան ոչնչութեան, մանրակրկտութեան, զարշնչիութեան կարողացել է հասնել մարդը, այսպէս կարողացել է փոխել: Եւ մի՞թէ սա նման է ճշմարտութեան. ամե՛ն ինչնման է ճշմարտութեան. ամե՛ն ինչ կարող է պատահել մարդուն: Այսօր աչ կրակոտ երիտասարդը զարհուրած յետ կը փախչէր, եթէ նրան ցոյց տային իւր իսկ պատկերը ծերութեան հասակում:

Հաւաքեցէք, տարէք ձեզ հետ երիտասարդական փափուկ հասակն անցնելիս և դաժան, խտասիրտ առնական հասակը թեւակոխելիս, հաւաքեցէք, տարէք ձեզ հետ բոլոր մարդկային զգացումները, մի՛ թողնէք ճանապարհի վրայ, յետոյ չէք կարող վերցնել: Սպառնալի և սոսկալի է մեզ սպասող ծերութիւնը և ոչինչ յետ չի տալիս: Գերեզմանը նրանից աւելի գթոտ է. գերեզմանի վրայ գրւում է. «Այստեղ մնալ է թաղւած», բայց ոչինչ չեւ կարող կարգալ տմարդի ծերութեան սառն, անզգայ դէմքի վրայ:

— Իսկ ձեր բարեկամներից այնպիսի մէկին չէք ճանաչում, ասաց Պլիւշկինը, նամակը ծալելով, — որին հարկաւոր լինեն փախըստական հոգիներ:

1) Лична.

— Ուրեմն փախստականներ էլ ունիք, արագութեամբ հարցրեց Ձիչիկովը սթափւելով։

— Բանն այն է, որ կան. փեսաս տեղեկութիւններ հաւաքեց, ասում է իբր թէ հետքերն էլ կորել են։ Բայց ինչքան էլ լինի, նա զինւորական մարդ է. խթանները չխլչխկացնելու վարպետ է, իսկ որ դատարաններում գործ տեսնի...

— Իսկ թւով ինչքան կը լինին։

— Եօթանասունի չափ դուրս կը գայ։

— Ձէ։

— Ասումած վկայ ճիշդ եմ ասում. տարի չի լինում, որ իմ մարդկանցից փախչող չը լինի։ Սարսափելի որկրամոլ մարդիկ են. անգործութիւնից սովորութիւն են դարձրել ուտելով տրաքւել. իսկ ես դեռ ինքս ոչինչ չունիմ ուտելու... Նրանց համար ինչ էլ որ տային, կառնէի։ Խնդրեմ խորհուրդ տաք ձեր բարեկամին. եթէ նրանցից միայն տասն հոգի էլ գտնւի, էլի լաւ շահուենայ։ Ախր մի հոգին հիմա հինգ հարիւր ուժըլու գին ունի։

«Ձէ, բարեկամս իսկի ականջն էլ չեմ զցիւր, ասաց ինքն իրան Ձիչիկովը և յետոյ բացատրեց, որ այդպիսի բարեկամ երբէք չի գտնւի, որ այդ գործի համար միմիայն ծախսերն աւելի շատ կը նստեն, որովհետեւ մարդ հազիւ թէ կարողանայ եախէն դատարաններից ազատել ու հեռու փախչել. իսկ եթէ նա արդարեւ այնքան նեղութեան մէջ է, ինքը, կարեկցութիւնից շարժւած, պատրաստ է տալու... Բայց այդ այնպիսի մի շնչին բան է, որի մասին չարժէ էլ խօսել։

— Իսկ դուք ինչքան կը տայիք, հարցրեց Պլիւշկինը և ինքը ջհուտացաւ. նրա ձեռքերը սնդիկի նման դողդողացին։

— Ես կը տայի ամեն մի հոգուն քսան և հինգական կոպէկ։

— Եւ ինչպէս, կանխիկ փողով էք առնում։

— Այո, փողերը հէնց այժմ։

— Բայց, սիրելի բարեկամ, իմ աղքատութեան համար զո՞նէ քառասնական կոպէկ էլ է տւէք։

— Մեծայարդ տէր, ասաց Ձիչիկովը, քառասնական կոպէկից ինչ կը լինի. հինգ հարիւրական ուժըլի էլ կը վճարէի, մեծաւ ուրախութեամբ կը վճարէի, քանի որ ձեզպէս յարգելի, բարի ծերունին

նեղութեան մէջ է իւր սեփական բարեսրտութեան պատճառով։
—Աստուծ վկայ՝ այդպէս է, Աստուծ վկայ՝ ճիշդ է, ասաց Պլիւշկինը գլուխը քաշ զցելով և տխուր կերպով շարժելով։— Բոլորը բարեսրտութիւնից։

—Ա՛յ, տեսնում էք, իսկոյն հասկացայ՝ ձեր բնաւորութիւնը։ Ինչու պէտք է ամեն մի հոգուն հինգ հարիւր ուռբլի չը սալի։ Բացց... կարողութիւն չունիմ։ Համեցէք, պատրաստ եմ հինգ-հինգ կոպէկ աւելացնելու, որ այդպիսով ամեն մի հոգին եռեսուն կոպէկ նստի։

—Լաւ, հոգիս, ձեր կաշին է, զո՞նէ երկ-երկու կոպէկ էլ վրայ եկէք։

—Երկ-երկու կոպէկ էլ վրայ կը դամ, համեցէք։ Քանի հոգի են. կարծեմ՝ ասացիք եօթանասուն։

—Ո՛չ, բոլորը միասին եօթանասուն և ութ հոգի կը լինի։

—Եօթանասուն և ութ, եօթանասուն և ութ, ամեն մի հոգին երեսուն կոպէկից՝ ալդ քեզ... Այստեղ մեր հերոսը մի բոպէ, ո՛չ աւելի, մտածեց և մէկէն ասաց.— Ընդամենը կը լինի քսան և չորս ուռբլի իննսուն և վեց կոպէկ։ Նա Եւաքանութեան մէջ շատ վարժ էր։ Հէնց իսկոյն նա ստիպեց Պլիւշկինին, որ ստացականը գրէ և տւեց նրան փողերը, որը առնելով երկու ձեռքերի մէջ, տարաւ դրամարկղը դնելու այնպիսի զգուշութեամբ, որ կարծես թէ որ և է հեղանիւթ էր տանում և ամեն բոպէ վախճանում էր, որ չը լինի թէ չփշփայու թափի։ Դրամարկղին մօտենալով, նա դարձեալ մի անգամ տնտղեց փողերը և դրեց, նոյնպէս չափազանց զգուշութեամբ, դարակներից մէկի մէջ, որտեղ հաւանօրէն նրանց վիճակած էր թաղւած մնալ այնքան ժամանակ, մինչև որ տէր-վարպը և տէր-Պոլիկարպը, նրա գիւղի երկու քահանաները, նրան թաղէին, յանպատում ուրախութիւն դառները և փեսային, զուցէ և կապիտանին, որ իրան արձանագրել էր նրա ազգական։ Փողերը թաղցնելուց յետոյ Պլիւշկինը նստեց թիկնաթուի վրայ և, երևում էր, այլ ևս նիւթ չէր գտնում խօսելու։

—Ի՛նչ, դուք արդէն պատրաստուում էք զնալու, ասաց նա, նկատելով, որ Զիչիկովը մի փոքր շարժում արեց միմիայն նրա համար, որ գրպանից թաշկինակը հանէ։

Այս հարցը Զիչիկովին յիշեցրեց, որ արդանրև չարժէր այլ ևս

ուշանալ:—Այո, ժամանակ է գնալու, ասաց նա գլխարկը վերցնելով:

—Իսկ թէ՛՞:

—Ո՛չ, աւելի լաւ է թէ՛՞նք մնայ երբ և իցէ մի ուրիշ ժամանակ:

—Ի՞նչպէս, հապա սամավար պատուիրեցիս Ես, խոստովանք լինի, թէ՛՞յի հետ այնքան գլուխ չունիմ. թանգ խմիչք է, մէկ էլ որ շաքարի գինը շատ է բարձրացել, կրակ է դառել: Պրնշկա, սամավար հարկաւոր է: Պաքսիմատը տար Մաւրալին տուր, լսում ես. թող էլի առաջւայ տեղը դնէ. կամ թէ՛ ոչ, ոչ, տո՛ւր ինձ այստեղ, յետոյ ես ինքս կը տանեմ:—Գնաք բարով, սիրելիս, Աստծու օրհնութիւնը ձեզ վրայ լինի: Իսկ նամակը կը տաք նախագահին, թող կարդայ. նա իմ վաղեմի ծանօթս է: Ի՞նչպէս է, նրա հետ մի ամանից էինք ուտում:

Այս խօսքից յետոյ այդ այլանդակ երևոյթը, այդ կծկած ծերուկը նրան բակի միջով ճանապարհ դրեց և ապա հրամայեց, որ հէնց իսկոյն դարբազը փակեն. յետոյ ման եկաւ մառանները, որ տեսնի, թէ իրանց տեղումն են արդեօք պահապանները, որոնք կանգնում էին բոլոր անկիւններում և փայտէ թիակները խփում դատարկ տակառներին, փոխանակ չուգունէ տախտակի: Ապա մտաւ խոհանոցը, որտեղ այն պատրւակով, որ իբր տեսնի, թէ ծառաները լնւ են կերակրում թէ ոչ, ինքը մի կուշտ չչիուկաշա կերաւ և բոլորին մէկ-մէկ հայդելով գողութեան և վատ վարք ու բարքի համար, վերադարձաւ իւր սենեակը: Մենակ մնալով, նա մինչև անգամ մտածեց, թէ ինչպէս շնորհակալ լինի հիւրից այսպիսի արդարեւ անօրինակ մեծահոգութեան համար: Եւս նրան կընծայեմ, մտածեց նա ինքն իրան, ծոցի ժամացոյցս. լաւ ժամացոյց է, արծաթէ, և ոչ թէ՛ պղնձէ կամ բրոնզէ: Մի քիչ փչացել է, բայց նա իրան համար կարկատել կը տայ. նա դեռ ջահիլ մարդ է. նրան հարկաւոր է ծոցի ժամացոյց, որ նրանով իւր հարսնացուին դուր գայ: Եկամ թէ, ոչ, աւելացրեց նա փոքր ինչ միտք անելուց յետոյ. աւելի լաւ է մահաւանդս յետոյ կտակով իրան թողնեմ, որ անուսս չիշէ: